

«ԱՆՁՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ԽՄԲԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ* 

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

«Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խումբը լեզվի բառապաշարի այն գործուն հատվածներից է, որը մշտապես համալրվում և հարստանում է հատկապես փոխառությունների միջոցով:

Ձեռնարկելով *զարդ* հասկացությունն արտահայտող բառերի և դրանց տարբերակների քննությունը հայերենի բարբառներում՝ հողվածում նպատակ է դրվել ներկայացնել ժողովրդի լեզվամտածողության յուրահատկություններն այս իմաստային դաշտում՝ որոշ չափով բացահայտելով հայ բարբառների բառապաշարի առանձնահատկությունները:

Աշխատանքի նյութն արդիական է, քանի որ այս իմաստային դաշտը գրեթե ուսումնասիրված չէ ինչպես արդի գրական հայերենում, այնպես էլ հայերենի բարբառներում, և կարևորվում է նրանով, որ փորձ է արվել *զարդ* հասկացություն նշող բարբառային բառերի փոքրիշատե ամբողջական բառացանկը ներկայացնել:

Քննությամբ պարզվել է, որ զարդերի ու զարդարանքների անվանումները բավականաչափ բազմազան պատկեր են ներկայացնում հայերենի բարբառներում, որը պայմանավորված է լեզվամտածողությամբ, աշխարհագրական, ժամանակային և այլ գործոններով: Գտել ենք «զարդ» հասկացություն արտահայտող շուրջ 100 բառ՝ բառակազմական և հնչյունական տարբերակներով, որոնց մեծ մասն արձանագրված չէ ստուգաբանական բառարաններում:

Բանալի բառեր – *զարդ, իմաստային դաշտ, բարբառ, ապարանջան, մատանի, վզնոց, գլխի զարդ, մազերի զարդ, առածներ, դարձվածքներ*

* **Լուսինե Ղամոյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Лусине Гамоян – кандидат филологических наук, старший научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА

Lusine Ghamoyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher – at the Institute of Language after H. Acharyan of NAS RA

Էլ. փոստ՝ lgamoyan@mail.ru. ORCID: <https://orcid.org/0009-0003-6552-5254>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.03.2024

Գրախոսվել է՝ 25.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

Զարդ, զարդարանք¹

«Անձնական զարդարանք» հասկացության անվանումների շղթայում ելակետային բառը **զարդն է**՝ «մարմնի այս կամ այն մասը զարդարելու ավել կամ պակաս չափով թանկագին կամ գեղեցիկ իր» իմաստով (ԺՀԼԲԲ), ապա՝ **զարդարանք** հասկացությունը՝ «այն բոլոր զարդերի ամբողջությունը, որով զարդարված է որևէ անձ կամ իր» իմաստով (ԺՀԼԲԲ): Հետաքրքրականն այն է, որ նշված հասկացությունները մեր ձեռքի տակ եղած հայերենի բարբառային բառարաններում արձանագրված չեն²: Միայն առկա են *զարդ* բառից կազմված մի քանի բաղադրյալ բառեր, ինչպիսիք են՝ **զարդարում** (Զթ.), **զարդ/ա/իչած** (Ագլ.), **զարդրման** (Տիգ.), **զարդրուն** (Զրս.), **զարդուկ** (Բլ., Մշ.), **զարդրվորիլ** (Մշ.)³:

Արդի հայերենում հաճախակի գործածություն ունեցող *զարդ* և *զարդարանք* հասկացությունները հայերենի բարբառներում արտահայտվում են հետևյալ բառերով. **խլխալ** (Սս.) «զարդեղեն, զարդարանք», **զուս ու զինաթ** «զարդ ու զարդարանք», **տուտուփ** «կանացի մի տեսակ զարդ», **զենաթ** (Վն.) «զարդ, զարդարանք», **սյուս** (Եվդ. (Ամս.)) «զարդարանք», **զագոնք** (Հմշ.) «զուգս, զարդարանք», **աջնաս** (Թբ.) «տնային ունեցվածքը՝ զարդեղեն և իրեր» և այլն:

Որպես թանկագին և անարժեք զարդերի անվանումներ՝ հայերենի բարբառներում արձանագրված են՝ **ամարաթ** (Կր.) «թանկագին ակնեղեն, զարդարանք», **ուրսկը** (Մկս.) «ոսկի», **վեսկի** (Ղրբ.) «ոսկի», **փլորի** (Թբ.) «ոսկի», **էրծաթ** (Ար.) «1. արծաթ, 2. արծաթե զարդ», **արծթուք** (Սբ.), **արծթունք** (Քղ.) «արծաթեղեն զարդեր», **զինաթ** (Ար., Թբ., Վն.) «1. զարդ, զարդարանք, 2. թանկագին իր», **զինիեթթ/զինիխաթ/զինիքար** (Հվր.) «ոսկեղեն ու արծաթեղեն զարդարանք», **խըշը** (Սս.) «զարդ՝ արծաթյա կամ ոսկյա», ապա՝ **երննիկ** (Ակն.) «մանր զարդ, չնչին պիտույք», **ճընխ-սընխ** (Խրբ.) «անարժեք՝ հասարակ զարդարանք» և այլն:

Զարդարվել («զարդեղեններով պատվել, զարդեր հագնել») հասկացությունը հայերենի բարբառներում արտահայտվում է հետևյալ բառերով՝ **խամկել/խամիլ** (Վն., Շտխ., Սս., Միպ., Խիգ.), **սյուսվել** (Վն.), **հագվորիլ** (Մշ., Սս.),

¹ Աշխատանքում ներկայացված օրինակները վերցրել ենք հետևյալ բառարաններից. Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հհ. Ա-Է, Եր., 2001-2012, **Հ. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան («Էմինեան ազգագրական ժողովածու»), հ. Թ, Թիֆլիս, 1913: Դրանք համեմատել ենք հետևյալ բառարաններով. **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հհ. Ա-Դ, Եր., 1971-1979, **Գ. Ջանուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, **Սո. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, 2 հ., Եր., 2000, **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Եր., 1969-1980, **Հ. Աճառեան**, Թուրքերեն փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուի մեջ համեմատությամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներում, Մոսկուա-Վաղարշապատ, 1902 (բոլոր բառարանները տե՛ս http://www.nayiri.com/dictionaries.jsp?l=hy_LB):

² Զարդ բառը կա միայն Թբիլիսիի բարբառում՝ «ղեղին» իմաստով:

³ Նշենք, որ զարդ արմատով օրինակները բերված են ըստ ՀԼԲԲ-ի, որտեղ գրությունը երբեմն չի արտահայտում բառերի բուն արտասանությունը, ինչպես՝ զարդարում (Զթ.՝ ճարդարում):

տրոսվել (Թբ.), **սուքրոտել** (Սշ. (Բղշ.)) «ինքն իրեն զարդարել», **սքվիլ** (Պլ., Մբ., Խրբ.) «զուգվել-զարդարվել, հագնել-կապել», **սրպուրիլ** (Սվ.) «զարդարվել», **կոկվորել** (Խրբ. (Բլ.)) «հարդարել, հարդարվել, արդուզարդը տեղը լինել», **զարդրվորիլ** (Սշ.) «զարդարվել», **զլպսվել/զլպսվիլ/զպլսվել** (Աբ., Թբ.) «պճնվել, զուգվել-զարդարվել», **գրեհվել** (Ղբբ.) «զուգվել, զարդարվել», կան նաև **բայական հարադրություններ**, ինչպես՝ **լոսվել-կոկվել** (Ղբբ.) «զարդարվել, զուգվել», **զարվել-զարդարվել** (Վն.) «զուգվել, պճնվել», **կալել-կապել** «1. կալ-կապս անել, 2. հագնվել, զարդարվել, զուգվել» և այլն:

«Ջարդարել» հասկացությունն արտահայտվում է **խոնջուլել** (Ղբբ.) «զարդարել (վզնոցով, օղերով)», **խարքնել-խիցնել** (Սշ., Մս.) «զուգել-զարդարել», **կածնել** (Խտջ.) «զարդարել» և այլ բառերով:

«Ջարդարել» իմաստն ունի նաև արդի հայերենի «կազմել» բայը («հավաքելով, համախմբելով, միավորելով կազմակերպել՝ ստեղծել (որևէ ամբողջական բան)»), որը Համշենի բարբառում դրսևորվել է **զագնուշ** հնչաձևով և ունի «հարսի շորերը հագցնել, որևէ բան զարդարել, ձին սարքել» նշանակությունները⁴:

«Պճնանք սիրող, պճնվել՝ զուգվել՝ զարդարվել սիրող» կամ «պճնված, զարդարված» անձը հայերենի բարբառներում բնորոշվում է հետևյալ բառերով՝ **խազան** (Վն.) «հագնված, զարդարված», **զարդրման** (Տգր.)//**զարդրմուն** (Չրս.)//**զարդրուկ** (Խրբ., Բլ., Սշ.) «զարդարված», **զարտրուկ** (Վն.) «զարդարված», **այլը-փուլլու** (Պրտ.) «փայլուն զարդերով զարդարված», **հագվուն** (Մբ.) «պճնազարդված, հագած-կապած», **կածվուկ** (Խտջ.) «զարդարվող», **սյուսլի** (Վն.) «պճնասուլ, պճնասեր», **շղվայեկ** (Պլ. (Պրտ.)) «պշրվել, զարդարվել սիրող», **զարդասիչած** (Ազլ.) «զարդարված, զարդարուն, նախշուն», այդպես նաև՝ **տնկոզություն** «զուգվել-զարդարվելով սիգալը», **տոտոզել** (Կր. (Չվիս., Ախք.)) «1. զուգել-զարդարել, 2. խաբել, 3. սիգալ, շորորալ» և այլն: Առկա են նաև անվանական մի շարք հարադրություններ, ինչպես՝ **հագուկ-սքուկ** «զուգված-զարդարված», **զարուն-զարդարուն** (Վն.) «լավ զարդարված, զուգված, պճնված», **ստթոթ-կոկող** (ՆԲ) «պճնասեր, զարդարվել՝ պճնվել սիրող», **կուտ-կուտուզ** (Նկմ.) «հագնված-զուգված» և այլն:

«Ջարդ» ասելով սովորաբար հասկանում ենք հետևյալ հասկացությունները՝ **սպարանջան**, **ականջօղ**, **վզնոց**, **մատանի**, **զլխազարդ** և այլն. այս բառերը հիմնականում գործածվում են արդի գրական հայերենում, իսկ բարբառներում դրանք արտահայտվում են զանազան այլ անվանումներով, որոնց կծանոթանանք ստորև:

Ապարանջան

«Դաստակին անցկացնելու օղակաձև զարդ»: Հայերենի բարբառներում փաստված է մի շարք հնչյունական տարբերակներով՝ **սպորճան/սպորջան** (Բլ., Էվր., Սշ., ՆՆ, Շմիս., Պլ., Մբ., Քղ. և այլն), **սպորնճան** և այլն:

⁴ Տե՛ս **Ն. Խաչատրյան**, Իմաստափոխության իրողություններ Համշենի բարբառում // Ջահուկյանական ընթերցումներ, 1 (16), Եր., 2021, էջ 38-48:

«Ապարանջան» նշանակությամբ Նոր Ջուղայի բարբառում հայտնի է՝ *ալանգու*, Նոր Նախիջևանում՝ *ասլիճան*, Ղարաբաղի (Գանձակ) բարբառում՝ *սլվոն*, *կոլլուդ*, ապա՝ *սլթո* (Տգր.) «կանանց թևի ոսկեդեղն գարդ», *մասսե* (Տիգ.) «արծաթե գարդ, որ անց են կացնում մանուկների թևերը՝ հետը խաղալու համար» և այլն:

«Բազպան, թևակալ, ապարանջան» նշանակությամբ գործածական են նաև՝ *բազբանդ* (1. Ար., Մկս., Մղր., Մշ., ՆԲ, Շտխ., Վն.)//*բազմանդ* (Ար.)//*սոզպանա* (Ար.) բառային տարբերակները, ինչպես նաև՝ *բիլագիզ* (Ար., Կր.)//*բիլագուկ* (Ար., Ղրբ., Մշ., Վն.)//*սլիկեզուկ* (Ամս.):

«Ապակե ապարանջան, ապակե թևնոց» իմաստով Սեբաստիայի բարբառում ունենք՝ *սրչա*, Խարբերդում՝ *շեն*, *բագիլա*, «ոտքի ապարանջան» նշանակությամբ հայտնի են *աղթաման* (Բլխ.) և *խալխալ*⁵ կամ *խալխալա* (Կր., Բլնխ.) բառերը. վերջինս ունի և՛ *ձեռքի*, և՛ *ոտքի ապարանջան* իմաստները:

Ականջող

«Ականջի օղ, գինդ» իմաստով գտել ենք միայն Կոդբի խոսվածքում գործածվող *անգջաթան* «ականջող» բառը, իսկ Մուշի բարբառում՝ *անկջիկ*, *անկջուկ* «կանացի գարդարանք (կտորի վրա ոսկիներ են շարում և կախում ականջին)»:

Վզնոց

«Վզին կապելու կանացի գարդ բաղկացած ոսկիների կամ մարգարիտների շարոցից», «վզից կախելու հուռույթ, հմայիլ»: Բարբառներում այն գործածվում է *վզնոց* (Մբ., Մշ., Ջթն.)//*վիզնոց* (ՆՆ, Ջթն.) տարբերակներով՝ «1. վզնոց, 2. (Մբ.) փողկապ, 3. (Մշ.) հուռույթ, 4. (ՆՆ, Ջթն.) կանացի գլխաշոր» իմաստներով:

Որպես վզնոց բարբառներում հայտնի են հետևյալ բառերը՝ *բերթանան* (Քնդ.) «վզնոց», *թիլզցիկ* (Թբ.) «մանյակ», *զուսկ* (Խիգ.) (զուքս-ի աղավաղված ձևը նեղ՝ մասնակի իմաստով)//*զուքս* «մանյակ, վզնոց», *բողմաղ(ա)* (Բս.) «կանանց պարանոցի գարդ՝ մետաքսե երիզի վրա կողք կողքի կարված ոսկյա ձողիկներով, որոնցից կախվում են ոսկյա դրամներ», *կոլանջարդաթ* (Ղրբ.) «կանանց վիզը ծածկելու գարդ», *կորդոն* (Վն.) «ոսկե կամ արծաթե շղթա՝ կանանց վզից ժամացույցը կախելու համար», *ճտանոց* (Ղրբ.)//*ճտնոց* (Ար., Կր., Վն., Մբ.) «կանանց պարանոցի գարդ, ոսկիների, արծաթի և այլն շարք՝ վզից կախելու համար, վզնոց», *սյումանճուկ* «կանանց պարանոցի՝ կրծքի արծաթյա գարդ», *սյուխաղ* (Խտջ.) «կանացի մի տեսակ վզնոց», *ոսյրնի* (Խրբ. (Բլ.)) «կանացի արծաթյա մանյակ», *թխտիկ* (Խրբ. (Բլ.)) «արծաթյա եռանկյունաձև գարդ, որ կանայք կախում են պարանոցից», *լոխ* (Վն.) «կանացի ոսկե կամ արծաթե պարանոցի գարդ», *լոՖ* (Քդ.) «արծաթե գարդ, որ կանայք կախում են պարանոցից»,

⁵ Այս բառն ունի համանուն՝ *խալխալ*¹ «1. Ղրբ., Նբ., Վն., Ուրմ. խալեր ունեցող, խալավոր, պիսավավոր, պուտ-պուտ նշաններով: 2. Նբ. նարդի խաղի մեջ մեկ նշանով քարեր»:

բառակապակցությամբ հանդիպում ենք՝ **դեղին ճտնոց** (Վն.) «ոսկու շար, որ կանայք կրում են վզների»:

Կրծքի զարդ

Կրծքի զարդ նշանակող բառերից են՝ **պրոշ** (Սշ.) «բրոշ, կրծքի զարդ», **դռշանոց** (Բրչլ.) «կրծքի քորոց՝ զարդ», **կոսթեղ** (Խտշ.) «արծաթներով շարված կրծքի զարդ», **ձնեք** «երկար ոսկեղեն կանացի զարդ, որ կախում են կրծքին» և այլն:

Ճակատի զարդ

«Ճակատի զարդ» հասկացությունը բարբառներում արտահայտվում է իմաստային նրբություններ ունեցող տարբեր բառերով, ինչպես՝ **երեսնոց** (Ուրմ., Սբ., Շիր., Սշ., Վն.) «վրան ոսկի կամ արծաթ դրամներ շարած կտոր, որ կանայք իբրև զարդ կապում էին ճակատներին», **ճակատ(ա)նոց** (Ղրբ., Կր., Սշ., Տիգ.)//**ճակտնոց** (Կր., Սշ., Վն., Սբ.) «կանանց ճակատին իբրև զարդ կապվող ոսկորների շարան», **ճայտի օսկի** «կանանց ճակատի զարդոսկիները», **ճղեք** (Սբ.) «կանանց ճակատի մարգարտյա զարդ», **մախչա/մաղչա** (Վն., Խիգ., Պպ.) «կանանց ճակատի զարդ», **մահմուտիա** (Սշ.)//**մայմաղիա** (Կր., Ախբ.) «թուրքական հին ոսկե կլոր զարդարանք, որ կանայք գործ էին անում շերտի մեջ ճակատը զարդարելու համար», **ջաղալաթ** (Քսբ.) «ճակատանոց» և այլն:

Քթի զարդ

«Քթի զարդ» հասկացությունն արտահայտող բառերից հայերենի բարբառներում գտել ենք՝ **խազեմ** (Խիգ.) «քթի զարդ», **խզմա(ր)** «1. Շիր., Ջվխ. շորի կտոր՝ թաշկինակ, որով հնում կանայք ծնոտի տակից ծածկում էին իրենց քիթն ու բերանը, քթկալ, 2. Կր., Սշ., Բլ., Պպ. արծաթյա կամ ոսկյա փոքրիկ զարդ, որ կանայք անց էին կացնում քթի ներքևի մասից» և այլն:

Մատանի

«Մետաղե փոքր օղ, հաճախ վրան որևէ գոհար, որ իբրև զարդ դնում են մատները»: Այս նշանակությամբ բարբառներում գործածվում են հետևյալ բառային միավորները՝ **ալիանս** (Պլ.) «խոսքկապի ոսկե մատանի», **մանիկ** (Ուրմ.) «մատանի», **մաննա** (Քսբ.)//**մաննիք** (Մկս.) «մատանի», **մատնի** (Պլ., Կր., Սբ.) «մատանի», **մատնիկ** (Վն., Սշ., Ակն., Շտխ., Սս.) «մատանի», **նշան/նիշոն** «1. նշան, 2. նշանադրության ժամանակ փեսացուի կողմից հարսին տրված ոսկյա մատանի կամ այլ զարդ՝ իբրև հավաստիք նշանադրության» և այլն:

Գլխազարդ

«Գլխի զարդ, գլխի զարդարանք»: Այս իմաստով բարբառներում առկա են հետևյալ բառերը՝ **դիադեմ** (ՆՆ) «կանացի գլխազարդ՝ թագի ձևով», **զրլի** (Սշ.)

«կանացի գլխազարդ, որ բաղկացած է երկու շարք մարգարիտներից», **թամա-
ղա** (Վն.) «ժապավենի նման արծաթյա զարդ, որ կանայք կապում են գլխնե-
րին», **թանթանա** (Կր. (Ջվխ.)) «կանացի գլխազարդ, ճակատակալ», **կոլոթ** (Կր.,
Շիր., Ախց.) «1. կանանց գլխի կիսալուսնաձև զարդարանք պղնձից, փայտից
կամ խավաքարտից, որի վրայից գցում էին գույնզգույն գլխաշոր կամ շղարշ,
2. հավերի գլխի վրա փետուրե ցցունքը», **կոլոլ** (Ղրբ.) բառն ունի 6 իմաստ, ու-
րոնցից միայն 4-րդն է *զարդ* նշանակությամբ՝ «կանանց գլխի զարդ կազմող
ոսկե գնդիկները, որ կախվում են այտերին», **մեջանոց/միջանոց** (Ղրբ.) «մեծ ոս-
կի, որ կանայք գործ են ածում իբրև գլխի զարդ», **վազմա** «1. հատուկ փոքրիկ
աման, որի մեջ վառող են պահում, 2. կանացի գլխազարդ, որ ամրացվում է
գլխաշորին», **հրոթնանուց** (Ղրբ.) «կանանց գլխազարդ», **հրսանուց** (Ղրբ.) «Ղա-
րաբաղի կանանց գլխազարդ», **ճրնկրլ-մրնկլ** (Կր., Շիր., Խտջ.) «գլխի ոսկյա
զարդ», **ճլպինդ** (Ար., Կր., Շիր.) «կանանց գլխի զարդ՝ երկու մատնաչափ լայ-
նությամբ և ճակատի երկարությամբ թավշե կտոր՝ ոսկեգոծ թելերով ասեղնա-
գործված, որի վրա կարում են ճակատանոցի ոսկիները, ճղալ (կանացի գլխի
ցցուն զարդ», **շանճախ** (Ղրբ.)//**շանջախ** (Ղրբ.)//**շանրդ** (Ղրբ. (Գրս.)) «քորոց,
գնդասեղ (կանայք գործ են ածում որպես գլխազարդ», **ջավշակ** (Կր.) «կանացի
գլխազարդ, որ ձգվում է ճակատի վրա՝ մի քունքից մյուսը. մարգարիտներով
ու ոսկի ձողիկներով կարած ժապավեն, որի ներքևից խիտ առ խիտ շարված
են մանր տաճկական ոսկի դրամներ, կտուց», **պանցու** (Ղրբ. (Բլ.)) «արծաթյա
զարդ, որ կանայք կապում են իրենց գլխին» և այլն:

Մազերի զարդ

Բարբառներում «մազերի զարդ» հասկացությունն արտահայտող բառերից
է, օրինակ, **սարաղունջ** (Վն.)//**սարախումճ**-ը (Ջթն.)՝ «1. Վն. մետաքսե կամ մա-
հուղե կտոր՝ զարդարված արծաթ դրամներով՝ ուլունքներով՝ ասղենկար
նախշերով, որը կանայք ետևի կողմից կախում են մազերի վրա. վերևից իջնում
է մեջքից ցած կամ մինչև գոտկատեղը, 2. Ջթն. կանանց ֆեսի վրա ծոպի շուրջը
իբրև զարդ 4-5 կարգ խիտ առ խիտ շարված արծաթ մեկ փարանոցների շարք,
3. Խտջ. լայն ժապավենաձև բանաձո կտորզարդ նորապսակ հարսների հա-
մար» իմաստներով:

Պետք է նկատել, որ բարբառներում կան այնպիսի զարդերի անվանումներ,
որոնք միաժամանակ կարելի է օգտագործել մարմնի կամ զգեստի տարբեր
հատվածներում, ինչպես **շրիտ** (Ար., Մկս. (Խիզ.), Սշ. (Բղշ., Ալշ.)) հասկացույթ-
յունը, որը հայերենի բարբառներում փաստված է մի քանի հնչյունական տար-
բերակներով **շրետ** (Մկս.)//**շրիդ** (ՆԲ, Կր., Վն. (Պպ.))//**շերիտ** (Կր.)//**շերիթ**
(ՆՆ)//**շերիդ** (Արբ. (Գմք.))//**շիրիտ** (Ար., Սշ., Շտխ.) և այլն. այն միաժամանակ
գործածվում է և՛ որպես «նեղ ժապավեն, որ զարդի և ամրության համար կա-
րում են զգեստի կրծքին՝ թևերին՝ քղանցքին», և՛ որպես «կանանց գլխի զարդ
ժապավենի ձևով, խիտ-խիտ շարված ոսկի կամ արծաթ մանր դրամների շար,

որ կապում էին ճակատին»:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ վերոնշյալ բառերի մեծ մասն արձանագրված չէ մեր ձեռքի տակ եղած ստուգաբանական բառարաններում, հետևաբար, դրանց ծագումն անհայտ է: Միայն ենթադրաբար կարող ենք ասել, որ դրանք միգուցե բանավոր փոխառությունների արդյունք են: Շատ քիչ բառերի ծագումն է հայտնի, ինչպես՝ *ամարաթը* փոխառություն է արաբերենից, *խալխալ(այ)-ն*՝ պարսկերենից, *ապարանջանը* իրանական փոխառություն է, *արծաթը* բնիկ հնդեվրոպական բառ և այլն:

Քանի որ ոչ մի վայրի խոսվածք ամբողջությամբ նույնական չէ մեկ այլ վայրի խոսվածքի հետ, հետևաբար միևնույն բառը տարբեր բարբառներում կամ խոսվածքներում կարող է բոլորովին այլ նշանակություններ ունենալ, որի հետևանքով էլ առաջանում են բազմաթիվ համանունական շարքեր:

Ուսումնասիրության արդյունքում նկատել ենք, որ «անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խմբում համանուն բարբառային բառերը բազմաթիվ են, ինչպես՝

լոխ¹ (Ղրբ., Շմխ.) «ամենը, ամենքը, բոլորը, ամբողջը»-**լոխ**² (Վն.) «կանացի ոսկե կամ արծաթե պարանոցի զարդ»,

լոֆ¹ (Ակն., Այնթ., Խրբ.) «1. օճառի կտոր, 2. *Խրբ.* ծամոնի մեծ կտորը» - **լոֆ**² (Քղ.) «արծաթե զարդ, որ կանայք կախում են պարանոցից»,

թոթոնիկ¹ (Վն.) «թիթեռ» - **թոթոնիկ**² (ՆՋ) «արծաթյա զարդ, որ կանայք կախում են իրենց քունքերին»,

հալալ¹ (Ար., Ղրբ., Կր., Խտջ., Մշ., Սս. և այլն) «1. արդար, անխարդախ, ազնիվ, 2. հարազատ և այլ իմաստներ» - **հալալ**² (Սվ.) «ապարանջան՝ կեղծ քարով շինված»,

կոլոտ¹ (Ար., Լ., Ղրբ., Ղզխ., Կր., Շիր., Ապր., ՆԲ, Վն., Արճ.) «կարճահասակ, ցածրահասակ» - **կոլոտ**² (Ար.) «հորթի կամ արջառի տիկ, որով այգիներից քաղցու են կրում»-**կոլոտ**³ (Ար.) «գդակաձև կանացի գլխազարդ, որի վրայից գցում են մյուս զարդերը, կոպի, պոչ»,

խնդիկ¹ (Սս., Մշ.) «անասունների՝ մասնավորապես հորթերի թռչկոտելը, տրտինգ տալը»-**խնդիկ**² (Մշ.) «կանանց ֆեսի շուրջը կապած ասեղնագործ երիզ կամ ոսկիների շարան, ճակատանոց»,

կոպի¹ (Ար.) «կարճահասակ, ցածրահասակ» - **կոպի**² (Ար., Ղրբ., Թբ.) «կանացի գլխազարդի մի մասը, կլոր, շրջանակ, որ դնում են գլխին և վրան շարում են մյուս զարդերը կամ վրայից գցում են քողը»,

վարդ¹. բազմիմաստ բառ է՝ «1. վարդ, 2. *Ար. (Թվ.)* ծաղիկ, 3. *Կր. (Ջվխ.), Արբ.* գլխի մի տեսակ զարդ, որ կրում են կանայք և ունի վարդի ձև, 4. *Արբ. (Մշկ.)* «կանանց երեսի երկու կողմերից կախված ոսկիների շարանը» և այլն» - **վարդ**² (Սբ.) «վատ (մարդու մասին)» - **վարդ**³ «կենտ, անզույգ»,

ղազմա¹ (Պլ., Պրտ., Կր., Շիր., Հվր., Խտջ. և այլն) «բրիչ, փետատ, քլունգ» - **ղազմա**² (Ղրբ., Գրս.) «կանանց գլխազարդ»,

ճթիկ¹ (Ակն.) «վատ տեսակի մոմ» - **ճթիկ²** (Մշ., Բղշ.) «կանացի կոշիկի մի տեսակ, որը քայլելիս կպչելով հատակին կամ ներբանին ձայն է հանում» - **ճթիկ³** (Սբ.) «ասեղնագործության մեջ խաչաձև փոքրիկ նախշ» - **ճթիկ⁴** (Ակն.) «ճկույթ մատը» - **ճթիկ⁵** «արծաթե մանր դրամների շարան, որ կանայք կախում են վզներից իբրև զարդ»,

ճուտ¹ (ՆԲ) «կանանց ճակատի զարդարանք, որի երկու կողմերից, աչքերի մոտ, մարգարիտներ են շարված»-**ճուտ²** (Ղրբ., Գնձ.) «անդրավարտիքի՝ շրջագգեստի եռանկյունաձև կտորը, ձագ»,

մաննա¹ (Սվ.) «մանր, երկար և սրածայր տերևներով ծառ» - **մաննա¹** (Քսբ.) «մատանի»,

շամշա¹ (Մշ. (Բղշ.)) «կանանց ծամթելից կախված արծաթյա կամ ոսկյա զարդ»-**շամշա²** (Ակն) «թարմությունը կորցրած (թթի, պանրի և այլնի մասին)»,

շվիկ¹ «1. սուլիչ, 2. Ուրմ., Կր. (Շիր.), Մշ. (Ասյր.) հովվական սրինգ, շվի» - **շվիկ²** (Սրբ.) «կանացի գլխազարդ, որը բաղկացած է ոսկիների շարքերից, որոնք իջնելով կախվում են երեսի աջ և ձախ կողմերից»,

Պալի¹ (Ղրբ.) «կանացի գլխազարդ» - **պալի²** (Սս.) «բանալի»,

Փիրփիրիմ¹ (Հմշ.) **փիրփիր**, (Սբ.) **փրփրիմ**, (Կլկ. (Մրշ.)) **փրփրեմ** «դանդուռ» - **փիրփիրիմ²** «ոսկյա ճակատամանյակ» և այլն:

Համանուններ ունեն նաև հետևյալ զարդերի (նաև քարերի) անվանումները, ինչպես՝ **երեսնոց**, **խալխալ**, **ջուհար**, **հիլ**, **ալեր**, **բազբինդ** և այլն:

Բարբառներում գործածվող թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի անվանումներից հայտնի են՝ **շամշրաղ** (Ար., Թբ., Ղրբ. (Բրշ.), Կր. (Շիր.))//**շամ ջրաղ** (Կր. (Շիր.)), բազմիմաստ բառ է, որի 4-րդ իմաստն է՝ (Թբ., Ղրբ., (Բրշ.), Կր. (Շիր.)) «պայծառ փայլ ունեցող թանկագին քար, հակինթ, գոհար», **ջուհար**, ունի 5 իմաստ, բայց հիմնական իմաստն է՝ «թանկագին քար, գոհար», **ուսր** (Մշ.) «թանկարժեք սև քար, որից համրիչ են շինում», **հիլ** (Ար.) «թանկագին քար, որ ըստ ժողովրդական հավատքի իբր օձերի թագավորը պահում է իր բերանում՝ լեզվի տակ», **ալեր** (Վն.) «ալմաստ», **աղկույթ** (Մկս.) «հակինթ», **կայծի** «բյուրեղային թանկագին քար նոսան գույնի, նոնաքար, կարկեհան», **կանանչ քար** (Պլ.) «զմրուխտ, կանաչագույն թանկագին քար» և այլն:

Ինչպես հայտնի է, զարդերի անբաժանելի մասն են **հուլունքները**, բարբառներում՝ **ուլունք** «1. ուլունք, 2. շատ մանր», **հրլուն** (Թբ., Կր., Խրբ., Բլ.) «հուլունք», **պոնճուխ** (Եվդ. (Ամս.))//**պունճուխ** (Պլ.) «ուլունք», **ուլինգի-ճիկո** «ուլունքաշարի կենտրոնի մեծ ուլունքը» և այլն:

Հարկ ենք համարում նշել՝ կան զարդեր, որոնք գործածվել և գործածվում են որպես **կախարդանքի** (չարից պաշտպանվելու) միջոց: Դրանք հիմնականում չար աչքից պաշտպանվելու համար են: Նման զարդերից բարբառներում հայտնի են՝ **դրլըսմ** (Վն.) «թալիսման», **բազբինդ** (Մշ.) «հուռույթ, թալիսման», **աջիջատ** (Բլ.) «հուռույթ, աչքահուլունք, բժժանք» և այլն: Այսպես՝ **անժ(ը)մի** (Ախբ.)

«1. կանացի զարդ (մատանի, ապարանջան), որ ավագ ուրբաթ գիշերը դարբինները շինում են լուռ ու մունջ, յոթ ամբողջ դռներից հավաքած երկաթից, օգտագործում են իբր չար աչքից զերծ մնալու համար, 2. նշաձև զարդ, որ կախում են երեխայի օրորոցից կամ ամբացնում շորերին՝ չար աչքից զերծ պահելու համար», **շանենի** (Խոջ.) «կանանց վզնոցին հազգրած ոսկորներ, որոնք իբր պահպանում են չար աչքից» և այլն:

Մեր աշխատանքում արձանագրել ենք նաև զարդերի անվանումներով ձևավորված ուշագրավ առածներ ու դարձվածային միավորներ: Այսպես.

1. Հայտնի առածներից են՝ «**Խնկոտ քթին՝ խզմա**», «**Ծակ հիլունը գետինը չի մնաք**», «**Փեշակն՝ արհեստը... ոսկի բիլագուկ ա**», «**Տղա ունենամ ջիբավոր, աղջիկ կու ճարիմ ջիղավոր** (գլխագարդով)», «**Ամեն պապղացող ոսկի չի**», «**Ոսկին մանողր ա, գինը ծանողր ա**», «**Աղբուսը հուլունը է գթի, հենց գիղե մարքրիտ է**», «**Ժամանակն արծաթ է, ամեն վախտ ձեռք չի անցնիլ**», «**Կլայեկե (անագե) մատնիք ոսկու տեղ կառնիլ**», «**Մագե ջրվալին՝ սպրջմե կանթ (օղակ)**», «**Կարդալ ոսկի բիլագուկ է, էցկուկ (զցած) մարդու ձեռք**», «**Չող (մաքուր) ոսկին ժանգ չի բռնի**», «**Մատանիքին չեն տա, մատին կը տան**», «**Ոսկու արժեքը ոսկերիչ գինա**», «**Փեշակն օր կա օսկե բիլագուկ է**»⁶:

2. Դարձվածային միավորներից հայտնի են՝ «**Այդ օղը ականջիցդ հանիր**» (այդ բանը մոռացիր, դրանից հույսդ կտրիք), «**Թևը օսկի ապարանջան ունի/Թևը օսկի պիլեզուկ ունի**» (արհեստ ունի, լավ արհեստ գիտե, որը նրան քաղցած չի թողնի), «**Օղ անեղ, ականջը գցել, կամ ականջից կախել**», «**Մի բուռ ոսկի է**», «**Տեղովը մեկ ոսկի լինել**», «**Առաջը ոսկի լցնես (մի հաստ) չի վերցնի**» (խելոք, գործունյա, ազնիվ, շիտակ), «**Մեկին ոսկիների մեջ խեղդել**» (հարուստ վարձատրություն, նվերներ շնորհել), «**Գլուխն արծաթով ծածկվել**» (սպիտակել, ալեհեր դառնալ) և այլն⁷:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով «անձնական զարդարանք» հասկացությունն արտահայտող բառերը բարբառներում՝ գտել ենք 100-ից ավելի բառային միավոր, որոնց մեջ կան *թանկարժեք*, *կիսաթանկարժեք* և *անարժեք* զարդերի անվանումներ:

Պարզել ենք, որ հայերենի բարբառներում կան զարդերի այնպիսի անվանումներ, որոնք փոխառություն են իրանական լեզուներից կամ արաբերենից (դրանց քանակը շատ փոքր է), իսկ հիմնական մասի ծագումն անհայտ է, քանի որ արձանագրված չեն մեր ձեռքի տակ եղած բառարաններում (ստուգաբանական ու փոխառությունների):

Նկատել ենք, որ շատ զարդերի անվանումներ հայերենի բարբառներում

⁶ ՀԼԲԲ, Ա. Ղանալանյան, Առածանի, Եր., 1960:

⁷ Տե՛ս ՀԼԲԲ, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան, Եր., 2011:

փաստված են մի շարք հնչյունական տարբերակներով: Շատ բառեր էլ մի շարք խոսվածքներում զուգահեռաբար գործառում են տվյալ բարբառներին բնորոշ այլ բառազուգարանությունների հետ:

Կան զարդերի անվանումներ էլ, որոնք ոճական արժեք ունեն. դրանցից կազմվել են բազմաթիվ ուշագրավ առածներ ու դարձվածային միավորներ, որոնք առայսօր գործածվում են մեր հանրության կողմից:

ЛУСИНЕ ГАМОЯН – Исследование семантической (тематической) группы «персональные украшения» в армянских диалектах. – При исследовании выражающих понятие «Персональные украшения» слов в армянских диалектах мы заметили, что последние по большей части не зафиксированы в ряде имеющихся в нашем распоряжении словарей (этимологических и заимствований), а их происхождение, в основном, неизвестно. В ходе исследования мы попытались разделить названия драгоценных, полудрагоценных и бесценных украшений, классифицировав в отдельные группы многие диалектные названия, выражающие понятия браслет, серьги, кольцо, головной убор и заметили, что некоторые из наименований можно использовать одновременно в разных частях тела или одежды. Мы обратили внимание на омонимичные ряды (более 2 десятков), в которых только один из членов является словом, обозначающим понятие «украшения». Также нами было выявлено, что в армянских диалектах некоторые названия украшений использовались и используются как магические средства (защита от зла). Пристальное внимание в работе было уделено употребляющимся обществом по сей день многим популярным пословицам и фразеологизмам с названиями украшений.

Ключевые слова: орнамент, украшение, смысловое поле, диалект, браслет, кольцо, ожерелье, украшения для головы и волос, пословицы, фразеологизмы

LUSINE GHAMOYAN – Study of the Semantic (Thematic) Group "Personal Jewelry" in Armenian Dialects. – While studying the words expressing the concept "personal jewelry" in Armenian dialects, we noticed that the latter mostly not recorded in a number of dictionaries at our disposal (etymological and loanwords), and their origin is mostly unknown. In the course of the study, we tried to divide the names of precious, semi-precious and priceless jewelry by classifying many dialect names into separate groups expressing the concepts of bracelet, earrings, necklace, ring, head-ornament and noticed that some of the names can be used simultaneously for different parts of the body or clothing. We paid attention to homonymic series (more than 2 dozens), in which only one of the members is a word denoting the concept "jewelry". We also revealed that some names of jewelry in Armenian dialects were and are still used as magical means (for protection from evil). In the work, close attention is paid to many popular proverbs and phraseological units with the names of ornaments, which are still used by the society.

Key words: ornament, jewelry, semantic field, dialect, bracelet, ring, necklace, head and hair ornaments, proverbs, phraseological units